

Հայաստանի ազգային գրադարանում կմեկնարկվի գրքերի ձևավորման և
պատկերագրման ցուցահանդեսների շարք

Ապրիլի 2-ին, ժամը 14:00-ին Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական
մասնաշենքի 2-րդ հարկի ցուցասրահում ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ
առթիվ կբացվի առաջին՝ *«Մանկական գրքի պատկերագրման հայկական արվեստը
(20-րդ դարասկզբից մինչև մեր օրեր)»* խորագրով ցուցահանդեսը:

Կներկայացվեն Հակոբ Կոջոյանի, Հրաչյա Ռուխկյանի, Գրիգոր Խանջյանի, Պերճ
Սարկիսյանի և այլոց նկարագրումներով գրքեր:

«Անտարես» հրատարակչությունը հատուկ ցուցադրության կներկայացնի Արաքսյա
Սարգսյանի նկարագրումները արձակագիր Գրիգի «Առնանգում, որ ցնցեց
կատուների աշխարհը» մանկապատանեկան դետեկտիվից:

«Զանգակ» հրատարակչությունը կներկայացնի Լևոն Նեսի «Բալզակ. մի շան
պատմություն» վիպակի գծանկարները, նկարագրումներ Լիլիթ Ալթունյանի
«Կապույտ աղվեսը» պատմվածքից և Արևիկ Դորի «Ժիրո» այբբենարանից, նաև Նաիրա
Մուրադյանի նկարագրումները «Զիփչու Նիչուն և կամակորները» գրքից:


Հասցեն՝ Տերյան 72


Հայաստանի ազգային գրադարան

Թամանյան մասնաշենք, 2-րդ հարկ

Մուտնքը՝ ազատ:

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՁՅԱՆ





ՀԱԿՈՐ ԿՈՋՈՅԱՆ



ՊԵՐՃՍԱՐԿԻՍՅԱՆ

